ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, «Անթիլիասի հակաթոռությունը Հայ Եկեղեցու կանոնական իրավունքի լույսի տակ» թեմայով դասախոսություն կարդաց իրավաբան պր. Գրիգոր Զուբարյանը։

Դասախոսության ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ ուսանողության կողմից կազմակերպված հերթական գրական երեկո, որի ընթացքում Գ լսարանի ուսանող բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը հետաքրքիր շարադրություն կարդաց «Առողջապահություն» թեմայով։ Շարադրության ընթերցումից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն։

Երեկոյին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսության դահլիճում, Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ կոմպոզիտոր Գուրգեն Ադամյանը տվեց թավջութակի համերգ՝ բաղկացած երկու մասից։ Դաշնամուրի բաժինը կատարում էր դաշնակահար Մարինե Հարությունյանը։

Նախքան համերգը, ԱՄՆ-ում հասարակական գիտությունների դասախոս պր. Վահագն Տատուրյանը, որը հյուրաբար գտնվում էր Մայր Աթոռում, բանախոսեց Ամերիկայի հայոց ազգային-եկեղեցական կյանքի մասին։

Բանախոսության և համերգին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև ամբողջ միաբանությունը, ուսանողությունն ու պաշտոնեությունը։ Բանախոսությունը լսվեց հետաքրքրությամբ, իսկ համերգը անցավ շատ հաջող՝ ստեղծելով արվեստի ջերմ մթնոլորտ և ապրումներ։ Համերգից հետո Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեց հարգելի արտիստներին և հյուր դասախոսին։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։ Պատարագի երգեցողությունները կատարեց Հոգևոր Ճեմարանի երգեցիկ խումբը։

Նույն օրը Երևանի եկեղեցիներում պատարագեցին և քարոզեցին նորընծա վարդապետները։

Երևանի Ս. Սարգիս եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց և «Խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ, և այն յաւելցի ձեզ» (Ղուկ. ԺԲ 31) բնաբանով քարոզեց հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաջիրյանը։

Ս. Զորավոր եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը «Ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ» (Յովհ. Ժ. 9) բնաբանով։

Ս. Հովհաննես եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենջյանը «Ի վերայ Աջոյն և էջմիածնի ամենայն Ազգն Հայոց կապեալ կան» (Առաքել Դավրիժեցի) բնաբանով։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ՇԱԲԱԹ երեկոյան, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ վիճաբանական երեկո «Առողջ միտք

առողջ մարմնի մեջ» թեմայի շուրջ։ Դեմ ու թեր վիճողներն էին բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանը և բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը։ Վիճաբանության շուրջ մտքերի փոխանակությանը մասնակցեց ներկա ուսանողության մեծ մասը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանի և հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանի, այցելեց Երևանի Կերպարվեստի սալոնում բացված Հայաստանի նկարիչների կիրառական արվեստի ցուցահանդեսը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։ Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Պատարագի երգեցողությունները կատարեցին Հոգևոր Ճեմարանի ուսանողները։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ, ՇԱԲԱԹ, հետմիջօրեի ժամը 2-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ գրական հանդես՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 39-րդ տարեդարձին։ Հանդեսը բացեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։ Կատարվեցին օրվա տոնը խորհրդանշող արտասանություններ, մեներգներ և խմբերգներ։ Նոյեմբերի 29-ի պատմական, ազգային մեծ նշանակության մասին բանախոսեց Հոգևոր Ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը։

Հանդեսի վերջում հայրենասիրական և օրհնության փակման խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը։

Հանդեսը վերջացավ «Հայր մեր» Տերունական աղոթքով։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Պատարագի վերջում, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Կառավարական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 39-րդ տարեդարձի առթիվ։ Նոյեմբերի 29-ի ազգային տոնի կապակցությամբ քարոզեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ այցելեցին Լեհաստանի մի խումբ նկարիչներ և արվեստի գործիչներ։ Հյուրերը եղան եկեղեցական արվեստի թանգարանում, մեծ ուշադրությամբ և հիացմունքով դիտեցին Մայր Տաճարի Հովնաթանյան նկարազարդումները։ Հյուրերը եղան նաև Վեհարանում, Ծաղկյա դահլիճում, որտեղ և նրանց ընդունեց Վեհափառ Հայրապետը։ Վերջում հյուրերը Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համբուրելով լավագույն տպավորություններով հրաժեշտ առին Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի հայոց եկեղեցու ատենապետ պր. Գևորգ Կարապետյանը, որը 2 ամիս հյուրաբար գտնվում էր Մայր Աթոռում, տեղադրելու համար նորաշեն աշտարակի ժամացույցը՝ նվեր բուլղարահայության՝ իր աշխատանքը վերջացնելուց հետո վերադարձավ Պլովդիվ, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ։